

Ավարտվեց դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարածքային փուլը

Ավարտվեց դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարածքային փուլը, որն անցկացվեց փետրվարի 7-14-ին 16 առարկաներից, այդ թվում՝ 6-ը առցանց: Օլիմպիադայի տարածքային փուլերին, որոնք անցկացվեցին Մեղրի, Կապան, Գորիս և Սիսիան քաղաքներում, մասնակցում էր 1750 աշակերտ:

Այս տարի օլիմպիադայի առաջին փուլի ամենաքիչ մասնակիցները աստղագիտություն առարկայից էին՝ 10-12-րդ դասարանի 15 աշակերտ, ամենաշատը՝ մաթեմատիկայից՝ 5-12-րդ դասարանների 2110 աշակերտ:

Առցանց օլիմպիադաների առաջին փուլին մասնակցել է 3500 աշակերտ, երկրորդ փուլի մասնակիցների անունները հայտնի կլինեն փետրվարի 18-ին և կտեղադրվեն www.olymp.am կայքում:

Կազմակերպիչների գնահատմամբ այս տարի առավել ակտիվություն են ցուցաբերել Կապանի, Գորիսի, Սիսիանի տարածաշրջանների և Ագարակի քաղաքային դպրոցների, ինչպես նաև Աճանան, Դավիթբեկ, Սյունիք, Արծվանիկ, Գեղանուշ, Եղեգ, Եղվարդ, Խնձորեսկ, Վերիշեն, Շինուհայր, Ակներ, Բռնակոթ, Գորայք, Սառնակունք, Ծղուկ, Դարպաս, Աշոտավան, Անգեղակոթ գյուղական համայնքների դպրոցների աշակերտները: Մրցանակային տեղերի մեծ մասը բաժին է ընկել մարզի 3 ավագ դպրոցներին /Կապանի թիվ 2, Գորիսի թիվ 4 և Սիսիանի ավագ դպրոցներին/:

Նշենք, որ հիմնական դպրոցներից օլիմպիադային մասնակցել են միայն 9-րդ դասարանցիները:

Փետրվարի 21-ից մարտի 9-ին Կապանում բոլոր 16 առարկաներից կկայանա օլիմպիադայի մարզային փուլը: